ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՇՆՈՐՀՔ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ
(Առաջնորդ Հայոց Գալիֆորնիոյ)

ՈՒՂԵՐՁ

ԳԱԼԻՖՈՐՆԻՈ ԹԵՄԻ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈ

Հարգելի՛ և սիրելի՛ երեսփոխաններ.

Երբ առաջին անգամ ըլլալով ներկա կը-գտնամ ու կնախագահեմ թեմիս Երեսփոխանա-կան այս ժողովին, առաջին պարտքս կնկա-տեմ կրկնել, այս անգամ Ձեր բոլորին ներ-կայութեան, այն՝ ինչ որ հաղորդեցի նամա-կով, երբ ստացա ընտրութեանս լուրը, և զոր արտահայտեցի նաև ատ, այս նվիրական հարկի տակ, առաջին ընդունելութեանս օրը։ Շնորհակալութիւն Երեսփոխանական ժող-ովիդ՝ իմ տկար անձիս վրա կայացուցած իր վստահութեան համար։ Այս ժողովը, զիս առաջնորդ ընտրելով, ինքզինք դրած եղավ պատասխանատուութեան մը ներքև։ Պատ-կառելի այս ժողովը թեմական գործոց հա-ջողութեան առաջին աղբյուրն է. իմ պաշտո-նավարութեան ընթացքին ձեռք ձգված արդ-յունավորությունը պիտի նկատվի նաև Ձեր հաջողությունը։ Ինձ համար հույժ քաջալե-րական էր թե՛ առաջին ընդունելության օրը և թե՛ այցելությանցս ընթացքին լսել և ունե-նալ համագործակցության ջերմ խոստում-ներ։ Վստահ եմ, որ այդ խոստումները իրենց ամենին պիտի վերածվին գործերու։ Ես ևս գիտակից եմ, թե ընդունելով Ձեր ընտրական որոշումը, ինքզինքս դրած եղա նույնքան ծանր պատասխանատուության ներքև։ Ինչ աղ ըլլա արդյունքը մեր ապագա գործունեության, առնվազն մեկ կետի մա-սին կրնամ վստահ ըլլալ Երեսփոխանական ժողովիդ։ Պիտի դնեմ ի սպաս այս թեմի առավել զորացման ու զարգացման ինչ որ Աստված և բնությունը որպես կարողություն շնորհած են ինձ։ «Օգնեցէք ինձ Աստուած և օրհնեցէք զձեզ դամենեսեան. ամէն»։

***

Շուրջ երկու ամիսե ի վեր հաստատված եմ պաշտոնիս մեջ։ Երկու ամիսը հազիվ թե բավական է ընդհանուր գաղափար մը կազ-մելու համար թեմական գործերու մասին։

Անցնող 6—7 կիրակիներու ընթացքին այ-ցելած եմ թեմիս հյուսիսային և կենտրոնա-կան բոլոր համայնքները. Զատկեն անմի-ջապես վերջ պիտի այցելեմ հարավի մեր մնացյալ երեք եկեղեցիները։

Այցելությանցս ընթացքին առհասարակ քաջալերական երևույթներու միայն ակ-նատես եղա։ Բան բավականի լսեցի նաև տխուր երևույթներու մասին։ Ես ինձ սկզբ-ունք դրած եմ, հարցնելով հանդերձ ըսողին անձը և ի մտի ունենալով հանդերձ ըսվածը, համոզումներս չկազմել երբեք լսվածներու հիման վրա։ Անձամբ վերահաստատ ըլլալ խնդրս առարկա հարցերու մասին՝ անհրա-ժեշտ պայման է առողջ և ուղիղ տեսակետ-ներ կազմելու համար։ Երանի թե ատիկա ամ-բողջ մեր ժողովուրդի սկզբունքը եղած ըլ-լար, շատ դժվարություններ ու մանավանդ բազում թյուրիմացություններ պիտի խնայ-վեին մեզի։

Հայկական Գալիֆորնիան, նահանգին պես, անապատներ ունենալով հանդերձ, պարարտ և խոստմնալից հող է ըստ երևույթին։ Լավ ժողովուրդ ունինք, և շատ լավ ուրամադրություններ կան. սակայն իմ ընդհանուր տպավորությունս այն եղավ, որ այս դեմինը պետք եղած չափով չէ մշակված, հատկապես կրոնական ու եկեղեցական մարզերու մեջ։ Մեր ներկա դժվարություններեն ոմանք արդյունք են այդ անտեսումին։ Այսուհանդերձ փառք կուտանք նախախնամության, որ այդ անդաստանը չէ մնացած բոլորովին խոպան, հայ ժողովուրդի դարավոր պարտեզը, հակառակ քիչ մշակված ըլլալուն և հակառակ սեղերուն և փուշերուն, որոնք աճած են իր շուրջն ու մեջը, տված է և կշարունակե տալ իր բարի պտուղը։ Եթե լավ ծրագրյալ աշխատանք թափվի Հայկական Գալիֆորնիո վրա, ան կրնա տալ առատ հոգևոր հունձք։

Եկեղեցին կրոնական մշակողները հոգևորականներն են։ Փառք կուտանք Աստուծո, որ ունինք եկեղեցականներու փոքր փաղանգ մը, որոնք իրենց կարողության համաձայն կմշակեն այս հողը։ Սակայն անոնց պակասը տակավին զգալի է։ Լավ ուսումնք առած, ձեռնհաս, բայց ամենեն ավելի հավատավոր երիտասարդ եկեղեցականներու պետք ունինք։ Մեր համայնքներեն ոմանք տակավին զուրկ են մնայուն հովիվներե. ուրիշներ պահանջքը ունին մեկե ավելիին։ Մեր առաջին հոգը պիտի ըլլա օր առաջ օժտել անհովիվ համայնքները իրենց օրինավոր հովիվներով։

Հովիվներու լման կազմեն վերջ թեմս պետք է ունենա իր պաշտոնական օրգանը, իր պաշտոնաթերթը, իր ձայնը լսելի ընծայելու, իր մշակութային ու եկեղեցական և դաստիարակչական գործը տարածելու համար թեմիս բոլոր անկյունները։ Պրոպագանդի և հայատարարության այս երկրին մեջ անհետաձգելի անհրաժեշտություն մըն է այս։ Չեմ կարծեր, որ սույն ժողովո մեջ գտնվի մեկը, որ համամիտ չըլլա գաղափարին, սակայն ամենուս մտահոգությունը՝ անոր նյութականը հայթայթելու հարցն է. տրված ըլլալով Առաջնորդարանի տնտեսապես ներկա անձուկ վիճակը, ի՞նչպես և ուրկե՞ ապահովել անոր նյութականը։ Հասկընալի և արդարացի մտահոգություն է այս։ Սակայն նախ նկատի պետք է ունենանք, որ մեզմե նվազ անդամ և հետևորդ ունեցող կազմակերպություններ ունին իրենց թերթերն ու կապրեցնեն զանոնք։ Մյուս կողմե, եթե լավ աշխատանք տարվի հովիվներու, հոգաբարձություններու, երեսփոխաններու և Եկեղեցվո կից բոլոր կազմակերպություններու կողմե, հաջողությունը կարևոր չափով մը կապահովվի։ Սակայն քանի որ Երեսփոխանական ժողովը ի վիճակի չէ անմիջապես որոշում կայացնելու այս մասին, փափագելի է, որ սկզբունքով ընդունվի այս առաջարկը, և այս ժողովը կազմե հանձնախումբ մը, որ ուսումնասիրե հարցը իր բոլոր երեսներում մեջ և իր եզրակացությունը բերե Կեդրոնական վարչական ժողովին, որ իր կարգին եթե համոզում դոյացնե, թե կարելի է նման ձեռնարկ մը գլուխ հանել առանց նյութապես բեռ ըլլալու Առաջնորդարանին վրա, տնօրինե հարկ եղածը՝ իբրև գործադիր մարմինը Երեսփոխանական ժողովուդ։

Պետք է Առաջնորդարանը դրվի իր անունին արժանի դիրքին վրա։ Որքան կտեսնվի, Առաջնորդարանը ցարդ փոքր չափով միայն կրցած է տալ իրմե ակնկալված առաջնորդությունը։ Արդ, որպեսզի ան կարենա լիովին ծառայել իր նպատակին, պետք է ընդարձակե իր գործը դպրոցական, հրատարակչական ու հատկապես ներքին կազմակերպչական մարզերուն մեջ։ Նման գործունեության համար Առաջնորդարանը ներկայիս նյութական միջոցներ գրեթե չունի։ Այս միջոցներեն մեկը պիտի ըլլա, կխորհինք, նշանակել անձ գլուխ մեկ դոլար տարետուրք Հայաստանյայց Եկեղեցվո 18 տարեկաններն վեր բոլոր զավակներուն համար։ Թեև առանձինն առնված ինքնին աննշան գումար մըն է այդ, սակայն հավաքվելով, կրնա գոյացնել հատուցի կարևոր աղբյուր։ Այս մասին Կեդրոնական վարչության հետ խորհրդակցաբար կարգադրեցինք, որ մեր տեղական եկեղեցիներու ունեցած բոլոր հասցեներուն շրջաբերական ղրկվի, հրավիրելով զիրենք վճարել անձ գլուխ մեկ դոլար տարետուրք։ Գործին հաջողությունը ամբողջությամբ կախյալ է մեր ժողովուրդին այս ծրագրի վերաբերմամբ բռնելիք ընթացքեն։ Հովիվներ, հոգաբարձուներ և այլ եկեղեցվո կից մարմիններ ևս կրնան մեծ դեր կատարել այս գործին հաջողության և արդյունավորման մեջ։ Փափագելի է, որ այս տնօրինությունը ևս որպես առաջարկ ղրկվի Երեսփոխանական ժողովիդ կողմե և անցնի իր որոշմանց շարքին մեջ։

Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի և անդ ապաստանյալ մեր եղբարց օգնության գործը տևական ընծայելու մտոք Կեդրոնական վարչության հետ խորհրդակցաբար տնօրինեցինք, որ մեր թեմի բոլոր եկեղեցիներու մեջ հատուկ պնակ շրջագայեցվի Մաղկազարդի կիրակին, և արդյունքը Առաջնորդարան փոխադրվի, որպեսզի մեր կարգին

ղրկենք զայն Երուսաղեմ։ Ցանկալի է, որ այս տնօրինությունը ևս որդեգրվի պատկառելի Երեսփոխանական ժողովիդ կողմե և անցնի իր որոշումներու կարգին։

Շատ խոսված ու մեծ մտահոգության առարկա եղած է ամերիկահայ երիտասարդության պարզած վիճակը։ Ժամանակն է այլևս, որ քիչ խոսվի այդ մասին և գործնական քայլեր առնվին այդ ուղղությամբ։ Ավելի քիչ մտահոգվինք, բայց ավելի շատ մտածենք կերպերու և միջոցներու մասին՝ զանոնք Եկեղեցիին կապված պահելու։ Շատ զոհողություններ, զիջումներ ըրած եք արդեն անոնց համար ձեր ընտանեկան ու ընկերային շրջանակներու մեջ։ Կարգ մը զիջումներ ու զոհողություններ ևս հարկադրված ենք ընել ի նպաստ անոնց, մեր եկեղեցական շրջանակին մեջ։ Միջավայրը կպահանջե և կպարտադրե զայն... Պարծանքով պետք է դիտենք, որ անոնցմե ներկայացուցիչներ կան մինչև իսկ այս պատկառելի ժողովին մեջ։ Կարգ մը հոգաբարձական կազմերուն մեջ նշանակելի թիվ մը կկազմեն անոնք։ Կրտսեր տիկնանց միությունները մեծագույն չափով անոնցմե կազմված են. դպրաց դասերը գրեթե ամբողջությամբ անոնք կլեցնեն։ Անոնք պետք ունին մեր առավել հավատացողության, համակրանքին և իմաստուն առաջնորդության։ Եթե իրենց կարգ մը տարրական պահանջքներուն գոհացում չտանք, պատասխանատու կմնանք առաջի Աստուծո, առաջի Ազգին և առաջի մեր Ամերիկայի հայության պատմության։ Գոյություն առած է Հայաստանյայց Եկեղեցվո Երիտասարդաց կազմակերպություն մը։ Ավելի զորացնել այս կազմակերպությունը, օգնել, որ ունենան իրենց ներկայանալի թերթը և հայթայթել իրենց համար գրականություն իրենց ազգային ու կրոնական ժառանգության մասին։ Այս կազմակերպությունը Կիրակնօրյայի հետ մեր ապագայի տեսակետե ամենեն կարևոր մարմինն է. հետևաբար մեր կեցվածքը ըստ այնմ բռնենք անոր հանդեպ։ Ձեր մասնավոր ուշադրության կհանձնենք անոնց կողմե եված առաջարկները։ Կիրակնօրյա վարժարաններու կարևորությունը շեշտեցինք հոգևորականաց համագումարին մեջ, և հարկ եղած գործնական տնօրինությունները ըրինք. կփափագինք, որ պատկառելի Երեսփոխանական ժողովի բոլոր անդամներն ալ զգային անոր կարևորությունը և իրենց շրջանակներու մեջ ուժ տային այս գործի հաջողության և առավել տարածման։ Կիրակնօրյան այլևս դուրս պետք է գա իր անվանական հանգամանքեն և դրվի հաստատ և հայեցի հիմքերու վրա։

Երեսփոխանական ժողովը մեր եկեղեցական գործերուն ընթացք տվող մեծագույն մարմինն է։ Պետք է գիտակցինք, որ թեև առհասարակ կզբաղինք մեր թեմի նյութական, վարչական և այլ հարցերով, խորքին մեջ ասկայն մեր հավատքի հիմնադիր ու մեր Տեր Հիսուս Քրիստոսի երկրի վրա սկսած ու մեր հայրերու աճեցուցած գործն է, որ մենք կշարունակենք։ Մեր որոշմանց ընթացքին պետք է մեկ նկատում միայն ի մտի ունենանք. բարիքը և զորացումը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիին, որուն հարազատ զավակներն եք ամենքդ։ Եթե Աստուծո գործին մոտենանք անկեղծ ոգիով, վստահ կըլլանք ըսել, որ Աստված ալ մեր գործը հաջողությամբ պիտի պսակե։

Ավելորդ է թերևս հիշեցնելն անգամ, թե մեր տեսակետները անկաշկանդորեն արտահայտելով հանդերձ, անոնց մեջ պիտի դնենք վայելչություն և լրջություն, նկատի ունենալով ոչ միայն վեհությունը տեղվույն ուր հավաքված ենք, այլ նաև սույն ժողովի պատկառելի հանգամանքը։ Կմաղթեմ բոլորիդ Ս. Հոգվո առաջնորդությունը և իմաստությունը, որպեսզի ունենանք արդյունավոր ժողով մը, ի պայծառություն մեր թեմին և ի փառս Աստուծո։